Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արմավիրի մարզի << Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ՆՋՊ-ի(զինղեկ0,5դրույք),մաթեմատիկա 17ժամ,Հայոց լեզու և գրականություն 18ժամ, ֆիզկուլտուրա (19ժամ),տեխնոլոգիա (1 ժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 10-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024 թվականի հոկտեմբերի 14-ին՝ժամը 14:00-ին,ՀՀ Արմավիրի մարզի << Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում.
հասցեն՝ Արմավիրի մարզ,Բաղրամյան համայնք գ.Արտամետ Գ.Նժդեհի 1 :

Տեղեկությունների համար զանգահարել (093) 24-37-40 հեռախոսահամարով:

<< Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն